

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ ԱՐԱՄԻ

**ԹՈՒՐՔ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ» ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ
(1950-1990-ԱԿԱՆ ԹԹ.)**

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի

Պաշտոնական ընդհիմնախոսներ՝

պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Մարուքյան Արմեն Ցոլակի

պատմական գիտությունների
թեկանածու, դոցենտ

Հովսեփյան Լևոն Սահակի

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի անվան

հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հուլիսի 15-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Համաշխարհային պատմություն 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ



Մարգարյան Գ. Ա.

ԱՏԵՆԱԵՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Չնայած Հունաստանը և Թուրքիան 1952 թ.-ից գտնվում են ՆԱՏՕ-ի կազմում և համարվում են դաշնակիցներ, սակայն, դա ոչ միայն չէր օգնում լուծել երկու երկրների միջև առկա խնդիրները, այլև, 1950-1990-ական թթ. դրանց ավելացան նորերը, որոնք հետզհետե ավելի խորացան և սրվեցին: Երկու երկրների միջև հիշյալ ժամանակաշրջանում ծառանում են Կիպրոսի խնդիրը և էգեյան հիմնահարցը, որոնց զարգացումն էլ կանխորոշելու էր ոչ միայն 1950-1990-ական թթ., այլև հետագա հույն-թուրքական հարաբերությունների ընթացքը: Այս խնդիրների ուսումնասիրությունը հույն-թուրքական հարաբերությունների բնույթը հասկանալու և վերլուծելու համար կարևոր և անկյունաքարային նշանակություն ունի: Միևնույն ժամանակ Կիպրոսի խնդրի ուսումնասիրությունը կարող է ավելի ընդլայնել մեր պատկերացումները Թուրքիայի քաղաքական գործելաոճի, ինչպես նաև այլ այդ թվում և Արցախի, կոնֆլիկտի հետ զուգահեռներ տեսնելու առումով:

Թեման քննվում է հույն-թուրքական, այսպես կոչված, դաշնակցային ձևաչափի համապատկերում և երկու երկրների միջև առկա խնդիրները մենք անվանել ենք «դաշնակցային կոնֆլիկտներ», քանի որ նույն ռազմաքաղաքական դաշինքի՝ ՆԱՏՕ-ի անդամ լինելով հանդերձ Թուրքիան և Հունաստանը բազմիցս գտնվել են կիսապատերազմական վիճակում կամ դրա շեմին: Կիպրական խնդիրը, ըստ էության, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված, Պոտսդամյան աշխարհակարգի առաջին էթնիկ-տարածքային վիճելի խնդիրն էր, որի փորձը որպես մոդել բավական կարևոր է: Հատուկ կարևորություն ունի կիպրական խնդրում Հունաստանի ու Թուրքիայի ներգրավումը, Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականության դերակատարումը: Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսի օկուպացիայից հետո ցայտուն կերպով դրսևորվել են թուրքական դեմոգրաֆիկ քաղաքականության առանձնահատկությունները, որի նպատակն է եղել կղզու էթնիկ նկարագրի

փոփոխությունը և թուրքական տարրի ավելացումը: Այդ նպատակի համար Թուրքիան պետականորեն կազմակերպել է թուրքերի վերաբնակեցման գործընթաց:

Տարածաշրջանային զարգացումների վրա ազդող, ինչպես նաև հույն-թուրքական հարաբերությունների բնույթը պայմանավորող մյուս խնդիրը էգեյան հիմնահարցն է, ուստի այսօր էլ այդ կոնֆլիկտի առաջացման նախադրյալները և զարգացումն ուսումնասիրելը ունի արդիական նշանակություն: էգեյան հիմնահարցը որոշակի դեր և տեղ ունի նաև Թուրքիայի եվրոինտեգրացիոն գործընթացներում: Հույն-թուրքական հարաբերությունների վրա ազդող գործոններից ենք համարում նաև «ատլանտիստական համերաշխությունը» որի ուսումնասիրությունը արդիական լինելով հանդերձ՝ ավելի ամբողջական է դարձնում պատկերը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է, ուսումնասիրել հույն-թուրքական հարաբերությունները՝ երկկողմ կոնֆլիկտների և դաշնակցային ֆորմատի համապատկերում, ի ցույց դնել երկկողմ խնդիրների առաջացման նախադրյալները և դրանց հետագա ազդեցությունը 1950-1990-ական թթ. հույն-թուրքական հարաբերությունների վրա: Այս նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել Կիպրոսի հունական ու թուրքական համայնքների առաջացման պատմական ուղին, դրա նախադրյալները, ինչպես նաև ցույց տալ կիպրական խնդրում Հունաստանի և Թուրքիայի ներգրավումը, հատկապես ընդգծելով այդ գործընթացի մեջ Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականության դերակատարումը:

2. Ցույց տալ Տյուրիխ-Լոնդոնյան համաձայնությունների և Կիպրոսի երեք պետականաստեղծ պայմանագրերի իրավական թերությունները, Կիպրոսի պետական համակարգի անկենսունակությունը և որպես հետևանք, 1963 թ.-ից սկսված և 1974 թ. իր գագաթնակետին հասած, միջհամայնքային պայքարի սրումը և դրա հետևանքները:

3. Մեկ տրամաբանական շղթայի մեջ ներկայացնել, Կիպրոսի հյուսիսի օկուպացիայից հետո, Թուրքիայի պետական քաղաքականությունը կղզում և ժողովրդագրական պատկերի փոփոխմանն ուղղված քայլերը:

4. Ընդհանուր գծերով պատկերել հույն-թուրքական հարաբերություններում էգեյան հիմնահարցի առաջացումը և նրա նախադրյալները: Հատուկ ընդգծելով էգեյան հիմնահարցի ունեցած ազդեցությունը հույն-թուրքական հարաբերությունների զարգացման վրա՝ առանձնացնել Դավոսյան գործընթացի և Թուրքիայի եվրոինտեգրացիոն գործընթացների վրա ունեցած ազդեցության օրինակները:

5. Դիտարկել հույն-թուրքական հարաբերությունների վրա արտաքին քաղաքական գործոնների դերը և ազդեցությունը, հատկապես շեշտը դնելով «ատլանտիստական համերաշխության» գործոնի և եվրոինտեգրացիոն գործընթացների վրա:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Հույն-թուրքական հարաբերություններում, հատկապես կիպրական խնդրի և էգեյան հիմնահարցի ձևավորման և ծավալման առումով, կարևոր են 1950-1990-ական թվականները, ուստի աշխատության շրջանակներում առավելապես կենտրոնացել ենք հիշյալ ժամանակաշրջանի իրադարձությունների ուսումնասիրության վրա:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը: Հետազոտության շրջանակներում, հույն-թուրքական հարաբերություններում առկա գործընթացների էվոյուցիան ուսումնասիրելու համար, ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են փուլայնացման, իրադարձային վերլուծության, վիճակագրական, պատմա-համեմատական մեթոդները: Մասնավոր գիտական մեթոդներից օգտագործվել են համակարգային և կառուցվածքագործնական մեթոդները: Աշխատանքի նպատակներից ելնելով, բազմիցս օգտագործվել է նաև փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը:

Ատենախոսության գիտական նորոյթն ու կիրառական

նշանակությունը: Հայաստանյան գիտական շրջանակներում Կիպրոսի խնդրի և ընդհանրապես հույն-թուրքական հարաբերությունների տարբեր ասպեկտների վերաբերյալ առկա են որոշակի ուսումնասիրություններ և անդրադարձներ: Սակայն 1950-1990-ական թվականների հույն-թուրքական հարաբերությունները և մասնավորապես՝ դրանց դիտարկումը «դաշնակցային կոնֆլիկտների» շրջանակներում նման ընդգրկմամբ և աշխատությունում ներկայացված հարցադրումների լույսի ներքո, մեզանում ուսումնասիրվում են առաջին անգամ: Աշխատանքում առկա նորոյթի մաս են կազմում նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության որոշակի ոճերի, սկզբունքների վերլուծությունը և հնարավոր զուգահեռների համար ներկայացվող հարցադրումները: Ներկայումս էլ թուրքական արտաքին քաղաքական գործելաոճի հիմքը կազմող այդ սկզբունքների իմացությունը և ուսումնասիրությունը, զուգահեռների դիտարկումը կարող են օգտակար լինել ոչ միայն հույն-թուրքական և դրանով նաև տարածաշրջանային հարաբերությունների այսօրվա օրակարգը ավելի խորությամբ ընկալելու համար, այլև Հայաստանի արտաքին ու անվտանգային քաղաքականության վերամշակման, կատարելագործման հարցում: Աշխատության առանձին դրոյթներ կարող են օգտակար լինել տարածաշրջանային խնդիրներին վերաբերող այլ ուսումնասիրությունների համար ևս: Բացի այդ, ատենախոսությունն ամբողջությամբ կամ դրա առանձին դրոյթները կարող են կիրառվել նաև ՀՀ բուհերի համապատասխան ֆակուլտետների ուսումնական ծրագրերում՝ Հունաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքականության, ինչպես նաև տարածաշրջանային կոնֆլիկտների, անվտանգային խնդիրներին վերաբերող դասընթացներում, ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի ստեղծման աշխատանքներում:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական

համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի կողմից, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են գիտական պարբերականներում հրապարակված հեղինակի գիտական յոթ հոդվածներում: Ատենախոսությունում ընդգրկված տարբեր խնդիրներ ներկայացվել են նաև հանրապետական գիտաժողովներում, ինչպես նաև մասնագիտական ֆակուլտետում իրականացված դասախոսությունների և սեմինարների շրջանակում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: 1950-1990-ական թթ. հույն-թուրքական հարաբերություններն ամբողջությամբ դիտարկելու համար, անհրաժեշտ է լայնածավալ և բազմաբնույթ գրականության խորքային վերլուծություն: Հայրենական գիտության մեջ, ատենախոսության թեմային առնչվող ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել Ռ. Մելքոնյանի հոդվածները¹ և Լ. Հովսեփյանի մենագրությունը²: Ռ. Մելքոնյանն իր հոդվածներում գլխավորապես ներկայացնում և արժեքավոր տեղեկություններ է հայտնում 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի Ստամբուլի քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների և 1964 թ. Ստամբուլից հույների արտաքսման վերաբերյալ: Լ. Հովսեփյանի մենագրության մեջ, որը գլխավորապես վերաբերվում է Թուրքիայի պաշտպանական համակարգին և դրանում ընթացող բարեփոխումներին, անդրադարձներ կան հույն-թուրքական հարաբերություններում առկա վիճելի խնդիրներին:

Օտարերկրյա պատմագիտական բնույթի աշխատություններից, որոնք անդրադառնում են ատենախոսությունում քննվող հույն-թուրքական հարաբերությունների վիճահարույց կետերին, անհրաժեշտ է առանձնացնել Բ.

¹ Մելքոնյան Ռ., 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը (Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ բռնությունների հերթական դրսևորումը), Արևելագիտության հարցեր, N 8, Երևան, 2013, էջ 144-156: Մելքոնյան Ռ., Հույների արտաքսումը Ստամբուլից 1964 թվականին, Վեմ, Երևան, 2018, 2 (62), էջ 177-194:

² Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Երևան, 2014:

Դոդդի³, Վ. Մալլիսոնի⁴, Է. Սոլստենի⁵, Բ. Պոցխվերիայի⁶ և Վ. Շմարովի⁷ աշխատությունները, որոնք ներկայացնում են կիպրական խնդրի ընդհանուր պատկերը, չնայած որոշ կետերի վերաբերյալ արտահայտած սուբյեկտիվ դիրքորոշումների: Էգեյան հիմնահարցի ուսումնասիրության տեսակետից, հատկապես կարևոր է առանձնացնել Բ. Օրանի⁸ և Ա. Հերակլիդեսի⁹ աշխատությունները, որոնք խորությամբ ներկայացնում են էգեյան հիմնահարցի առաջացման նախադրյալները, ընթացքը և հետևանքները:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը ներկայացնելիս, անհրաժեշտ է հատուկ ընդգծել նաև հետազոտությունում օգտագործված արխիվային փաստաթղթերը, որոնք առանձին հարցերի շուրջ բացառիկ փաստեր ու տվյալներ են պարունակում: Այս առումով, հատկապես հարկ է առանձնացնել Հայաստանի Ազգային արխիվում պահվող ՀԽՍՀ Արտաքին գործերի նախարարության (ֆոնդ 326) խնդրո առարկա ժամանակին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից ազատ հասանելիության դրված ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը¹⁰ և կրկին ազատ հասանելիության դրված ՄԱԿ-ի բանաձևերը¹¹:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով հետազոտությունների ուղղվածությունը և հեղինակների եզրակացությունները՝ ատենախոսությունում օգտագործված աշխատությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Խորհրդային հեղինակների աշխատություններ (Բ. Պոցխվերիա¹², Վ. Շմարով¹³, Բ. Եգորով¹⁴), որոնցում թեև ընդգրկուն վերլուծությանը և հաղորդված

³ Dodd C., The History and Politics of the Cyprus Conflict, London, 2010.

⁴ Mallinson W., Cyprus: A Modern History, London and New York, 2005.

⁵ Cyprus a country study, Edited by Solsten E., Federal Research Division, Library of Congress, Fourth Edition, 1993.

⁶ Поцхверия Б. М., Внешняя политика Турции после второй мировой войны, Москва, 1976.

⁷ Шаров В. А., Кипр в средиземноморской политике НАТО, Москва, 1982.

⁸ Turkish Foreign Policy, 1919-2006: Facts and Analyses with Documents, Edited by Baskin O., Salt Lake City, 2010.

⁹ Heraclides A., The Greek-Turkish Conflict in the Aegean: Imagined Enemies, 2010.

¹⁰ Historical Documents - Office of the Historian (state.gov).

¹¹ Система официальной документации Организации Объединенных Наций (un.org).

UNSCR - Search engine for the UN Security Council Resolutions.

¹² Поцхверия Б. М., Внешняя политика Турции после второй мировой войны, Москва, 1976.

արժեքավոր տեղեկություններին, ակնհայտ երևում են խորհրդային պետական գաղափարախոսության և ԽՍՀՄ արտաքին քաղաքական ուղենիշների ազդեցությունները:

2. Ռուս հեղինակների աշխատություններ (Օ. Բրեդիխին¹⁵, Ֆ. Գաջին¹⁶, Ի. Իվանովա¹⁷, Կ. Կոզիկ¹⁸, Յ. Կուրդյաշովա¹⁹, Վ. Ստեպանով²⁰ և այլք), որոնք թեև գլխավորապես զերծ են խորհրդային գաղափարախոսության ուղղակի ազդեցությունից և հետևապես բավական օբյեկտիվ են, սակայն, այս աշխատություններում ևս Կիպրոսի նկատմամբ խորհրդային արտաքին քաղաքականության որոշ հայեցակարգեր կամ դրանց արձագանքները, այնուամենայնիվ, պահպանվում են:

3. Արևմտյան հեղինակների աշխատություններում (Վ. Մալլիսոն²¹, Բ. Դոդդ²², Ջ. Քեր-Լինդսեյ²³, Է. Սոլստեն²⁴ և այլն) չնայած առկա արժեքավոր տեղեկություններին և վերլուծություններին՝ հատկապես բրիտանական հեղինակների մոտ ակնհայտ զգացվում է հույն-կիպրացիների հակազաղութային պայքարի և ԷՕԿԱ-ի նկատմամբ ընդգծված բացասական վերաբերմունք:

¹³ Шмаров В. А., Кипр в средиземноморской политике НАТО, Москва, 1982.

¹⁴ Егоров Б. Г., Кипр: тревоги и надежды, Москва, 1986.

¹⁵ Бредихин О. Н., Эволюция межобщинных отношений на Кипре, <https://textarchive.ru/c-2044177-r6.html>.

¹⁶ Гаджиев Ф., Независимость де-факто: Турецкая Республика Северного Кипра, Москва, 2008.

¹⁷ Иванова И. И., История и современное состояние Кипрского вопроса, Турция на рубеже XX-XXI веков, Москва, 2008, сс. 32-51.

¹⁸ Козик К. А., Европейский фактор в турецко-греческих отношениях в 1990-2000-е гг., Историческая и социально-образовательная мысль, 2012, N. 5, сс. 24-26, Козик К. А., Турецко-греческие отношения в 1990-е гг., Теория и практика общественного развития, Краснодар, 2012, N. 1, сс. 202-205.

¹⁹ Кудряшова Ю. С., Турция и Европейский союз: история, проблемы и перспективы взаимодействия, Москва, 2010.

²⁰ Степанов В. В., Кипрский конфликт: современное восприятие и проблема преодоления, Этничность и религия в современных конфликтах, Москва, 2012, сс. 466-518.

²¹ Mallinson W., Cyprus: A Modern History, London and New York, 2005.

²² Dodd C., The History and Politics of the Cyprus Conflict, London, 2010.

²³ Ker-Lindsay J., Britain and the Cyprus Crisis, 1963-1964, Bibliopolis, Mannheim und Möhnese, 2004,

Ker-Lindsay J., From U Thant to Kofi Annan: UN Peacemaking in Cyprus, 1964-2004, South East European Studies at Oxford (SEESOX), Oxford, 2005, (5/05).

²⁴ Cyprus a country study, Edited by Solsten E., Federal Research Division, Library of Congress, 1993.

4. Հույն հեղինակների աշխատություններ (Ա. Հերակլիդես²⁵, Մ. Աթալիդես²⁶, Է. Աթանասոպուլոս²⁷, Ն. Լոիզիդես²⁸ և այլն), որոնք հաղորդում են 1950-1990-ական թթ. հույն-թուրքական հարաբերություններում առկա խնդիրների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ, պարունակում են խորքային վերլուծություններ, թեև բնական է դրանցում հունամետ դիրքորոշման առկայությունը:

5. Թուրք հեղինակների աշխատություններ (Ա. Աթասոյ²⁹, Է. Գյուլեր³⁰, Հ. Փազարըլ³¹, Ի. Շահին և մյուսներ³², Ա. Չելիքքոլ և Ս. Քարաբեկ³³, Յ. Շեն³⁴), որոնցում հեղինակները ամեն կերպ պաշտպանում և արդարացնում են Թուրքիայի օկուպացիոն քաղաքականությունը, անդրադառնում, այսպես կոչված, «Հյուսիսային Կիպրոսի թուրքական Հանրապետության» կայացմանը, ժողովրդագրական խնդիրներին: Առանց ավելորդ զգացմունքայնության կարող ենք ասել, որ որոշակի հարցերում թուրքական պատմագրությանը բնորոշ ոճը՝ կեղծարարությունը և փաստերի միակողմանի ներկայացումը, այս ուսումնասիրություններում ևս ակնհայտ դրսևորված են: Սա հատկապես ցայտուն է դրսևորվում այն պարագայում, երբ թուրքական պատմագրությունը ագրեսիվ քննադատության է ենթարկում Արցախի և արցախահայության

²⁵ Heraclides A., *The Greek-Turkish Conflict in the Aegean: Imagined Enemies*, 2010.

²⁶ Attalides M., *Cyprus: Nationalism and International Politics*, New York, 1979.

²⁷ Athanassopoulou E., *Greek foreign policy and the Middle East: from possibility to fulfilment?*, *Byzantine and Modern Greek Studies*, Vol. 34, No. 2, 2010, pp. 219-236.

²⁸ Loizides N. G., *Ethnic Nationalism and Adaptation in Cyprus*, *International Studies Perspectives* (2007) 8, pp. 172-189.

²⁹ Atasoy A., *Kuzey Kıbrıs Türk Cumhuriyeti'nin Nüfus Coğrafyası*, *Mustafa Kemal Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü*, cilt 8, sayı 15, Hatay, 2011, ss. 29-62.

³⁰ Güler E., *Basında Rauf Denktaş ve Kıbrıs Mücadelesi*, *Bayterek International Journal of Academic Research*, c. 2, s. 1, 2020, ss. 96-112.

³¹ Pazarci H., *Ege Sorunları Paneli Ankara Üniversitesi Türk İnkılâp Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi*, ss. 33-34, *Mayıs-Kasım 2004*, ss. 167-215.

³² Şahin İ., Şahin C., Öztürk M., *Bariş Harekâti Sonrasında Türkiye'den Kıbrıs'a Yapılan Göçler ve Tatbik Edilen İskân Politikası*, *Turkish Studies - International Periodical for the Languages, Literature and History of Turkish or Turkic*, Volume 8/7, Ankara-Turkey, 2013, ss. 599-630.

³³ Çelikkol A. O., Karabel S., *Türkiye-Yunanistan İlişkileri ve Denizden Kaynaklanan Uluslararası Sorunlar Bilge Strateji*, Cilt 9, Sayı 16, *u. un.*, Bahar 2017, ss 13-31.

³⁴ Şen Y. F., *Türk Milliyetçiliği ve "Öteki" Algisi: Yunanistan'la Çözülemeyen Ege Sorunu*, *Türk İdare Dergisi*, *u. un.*, 2015, ss. 179 -228.

ինքնորոշման իրավունքը, սակայն լիովին այլ շեշտադրմամբ է ներկայացնում Կիպրոսում բնակվող թուրքերի «ինքնորոշման» խնդիրը:

6. Հույն և թուրք հեղինակների համատեղ կամ արևմտյան երկրներում աշխատող թուրք հեղինակների աշխատություններ (Ա. Հերակլիդես և Գ. Չաքմաք³⁵, Մ. Այդըն և Բ. Իֆանտիս³⁶, Բ. Օրան³⁷ և այլն), որոնցում հեղինակներն աշխատել են հույն-թուրքական հարաբերություններում առկա խնդիրները ներկայացնել առավել օբյեկտիվ՝ ներառելով երկու կողմերի՝ հունական և թուրքական տեսակետները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ամբողջ ծավալը 197 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գիտական նորոյթը, ներկայացվում են ատենախոսության նպատակը և խնդիրները, տեսամեթոդական հիմքը, ինչպես նաև քննվում են օգտագործված աղբյուրները, գրականությունը և տրվում է հարցի ուսումնասիրվածության ընդհանուր պատկերը:

ԳՆՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ:

1.1 **Կիպրոսում հունական և թուրքական համայնքների ձևավորումը և զարգացման առանձնահատկությունները** ենթագլխում ներկայացված է Կիպրոսում հունական և թուրքական համայնքների առաջացման համառոտ պատմությունը, կղզում օսմանյան տիրապետության տակ անցնելուց հետո, հաստատված «միլլեթների» կառավարման համակարգի բերած

³⁵ Greece and Turkey in Conflict and Cooperation: from Europeanization to De-Europeanization, Edited by Heraclides A. and Alioğlu Çakmak G., London and New York, 2019.

³⁶ Turkish-Greek Relations: The Security Dilemma in the Aegean, Edited by Aydın M. and Ifantis K., London and New York, 2004.

³⁷ Turkish Foreign Policy, 1919-2006: Facts and Analyses with Documents, Edited by Baskin O., Salt Lake City, 2010.

փոփոխությունները: Այնուհետև, ներկայացվում է 1878 թ. կղզու բրիտանական տիրապետության տակ անցնելուց հետո տեղի ունեցած փոփոխությունները, Կիպրոսում բրիտանական վարչակարգի վարած կրթամշակութային, իրավական, տնտեսական քաղաքականության առանձնահատկություններն ու հետևանքները: Այս ենթագլխում նաև ներկայացվում է հունական և թուրքական համայնքների ազգային ինքնության զարթոնքի էվոլյուցիան և դրան նպաստող գործընթացներն ու գործոնները:

1.2 Կիպրոսի խնդրում Հունաստանի և Թուրքիայի ներգրավվումը. կոնֆլիկտի միջազգայնացումը ենթագլխի սկզբում ներկայացվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում աճող հակազաղութային պայքարի ազդեցությունը Կիպրոսի ազգային-ազատագրական շարժման վերելքի վրա և բրիտանական գաղութային վարչակարգի հակազդեցությունը դրան: Այնուհետև, ներկայացվում է 1955 թ.-ից սկսված հույն-կիպրացիների զինված ԷՕԿԱ խմբավորման պայքարը բրիտանացիների դեմ և նրա նպատակները: Մանրամասն ներկայացվում է կիպրական խնդրի միջազգայնացման գործընթացը և կողմերի՝ Հունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի, այս խնդրում ունեցած շահերը, հետաքրքրությունները և հիմնական նպատակները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: ԿԻՊՐԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱ-ՀՈՒՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ 1960-1983 ԹԹ.:

2.1 1963-1964 թթ. կիպրական ճգնաժամի խորացումը. միջհամայնքային բախումներ ենթագլխում ներկայացվում է Յուրիխ-Լոնդոնյան համաձայնությունների և երեք պետականաստեղծ պայմանագրերի հակասությունները, թերությունները և որպես հետևանք Կիպրոսում կենսունակ պետական համակարգ ստեղծելու անհնարինությունը: Ներկայացվում է նաև այս խնդիրների լուծմանն ուղղված արքեպիսկոպոս Մակարիոսի ներկայացրած հայտնի «13 կետերից» հետո կղզում սկսված լարվածության և միջհամայնքային

բախումների հետևանքները, այդ բախումներում Հունաստանի, Թուրքիայի, ինչպես նաև համաշխարհային տարբեր խաղացողների (ԱՄՆ, ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիա և այլն) և միջազգային կառույցների (ԼԱՏՕ, ՄԱԿ, Չմիավորված երկրների շարժում) դերակատարումն ու հետապնդած նպատակները:

2.2 1974 թ.-ի թուրքական ներխուժումը Կիպրոս և դրա նախադրյալները ենթազվի սկզբում ներկայացվում է 1967 թ. Հունաստանում իշխանության եկած «սև գնդապետների» և Կիպրոսում Մակարիոսի իշխանության միջև եղած հակասությունների, Կիպրոսում «էնոզիսի» նկատմամբ հետաքրքրության նվազման պատճառները և դրանց ազդեցությունը 1974 թ. հուլիսի 15-ին կղզում տեղի ունեցած հեղաշրջման վրա: Այնուհետև, ներկայացվում է Կիպրոս թուրքական ներխուժման նախադրյալները, Թուրքիայի համար միջազգային բարենպաստ իրադրության պատճառները, ինչպես նաև թուրքական ներխուժման աղետալի հետևանքները:

2.3 Թուրքիայի պետական քաղաքականությունը Կիպրոսում կղզու հյուսիսի օկուպացիայից հետո (1974-1983 թթ.) ենթազվիտում ներկայացվում է, Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսի օկուպացիայից հետո, Կիպրոսի ժողովրդագրական պատկերի փոփոխմանն ուղղված թուրքական քաղաքականության նախադրյալները և ընթացքը: Ներկայացվում և վերլուծության են ենթարկվում նաև Թուրքիայի պետական այս քաղաքականության առաջացրած հետևանքները Կիպրոսի հետագա ճակատագրի վրա, ինչպես նաև 1983 թ., այսպես կոչված, «Հյուսիսային Կիպրոսի թուրքական Հանրապետության» անկախության հռչակման հարցում Թուրքիայի ունեցած դերակատարումը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ: ԷԳԵՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՐԸ ԹՈՒՐԲԻԱ-ՀՈՒՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ:

3.1 Էգեյան հիմնահարցի առաջացման նախադրյալները ենթազվիտում ներկայացվում է, 1970-ական թթ. կեսերից և Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսային հատվածի օկուպացիայից հետո, հույն-թուրքական

հարաբերությունների ամենավիճելի և պայթյունավտանգ կետը դարձած էգեյան հիմնահարցի առաջացման նախադրյալները և նախապատմությունը: Այնուհետև, առանձին-առանձին ներկայացվում են էգեյան հիմնահարցի բաղկացուցիչ խնդիրները՝ կապված Հունաստանի և Թուրքիայի տարածքային ջրերի սահմանման, մայրցամաքային շելֆի չափի որոշման, էգեյան ծովի կղզիների ապառազմականացման, օդային սահմանների որոշման, Թոփչքային տեղեկատվության շրջանների (FIR) հստակեցման հետ և դրանց առաջացման պատճառներն ու հետևանքները: Այս ենթազվխում ներկայացվում է նաև հույն-թուրքական հարաբերություններում և մասնավորապես էգեյան հիմնահարցում երկու ժողովուրդների դարավոր պատմական տրավմաների դերն ու ազդեցությունը:

3.2 էգեյան հիմնահարցը և հույն-թուրքական հարաբերությունների զարգացման հիմնական միտումները 1980-ական թթ. ենթազվխում ներկայացվում է 1980-ական թթ. հույն-թուրքական հարաբերությունների հիմնական միտումները՝ շեշտելով Հունաստանի ու Թուրքիայի վարած քաղաքականության վրա երկու երկրների ղեկավարների՝ Պապանդրեուփի ու Օզալի, վճռորոշ ազդեցությունը: Մանրամասն ներկայացվում է Պապանդրեուփի և Օզալի արտաքին քաղաքական տեսլականները, նրանց նպատակները և դրանց հիմքերը: Այս ենթազվխում հատուկ ուշադրություն է դարձվում նաև 1987 թ.-ի էգեյան հիմնահարցի սրմանը, երբ Հունաստանն ու Թուրքիան հայտնվել էին պատերազմի եզրին, ինչպես նաև այդ ճգնաժամից հետո սկսված Դավոսյան գործընթացի նախադրյալներին և դրա տապալման պատճառներին:

3.3 էգեյան հիմնահարցի զարգացման հիմնական առանձնահատկությունները 1990-ական թթ. ենթազվխում ներկայացվում են հույն-թուրքական հարաբերություններում առկա էգեյան հիմնահարցի 1990-ական թթ.-ի զարգացումները՝ շեշտը դնելով հատկապես 1996 թ. հունվարի Իմիա-Քարդաքյան ճգնաժամի բռնկման պատճառների և այդ ճգնաժամից հետո, Թուրքիայի կողմից «գորշ գոտիների» վերաբերյալ հայեցակարգի առաջ

քաշման վրա: Միաժամանակ, ցույց տալով էգեյան ծովի հունական կղզիների նկատմամբ թուրքական կողմի հավակնությունների նպատակները և դրանց իրավական առումով անհիմն լինելը:

**ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ: ԹՈՒՐԲ-ՀՈՒՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ:**

4.1 **«Ատլանտիստական համերաշխության» գործոնը ԱՄՆ-Հունաստան-Թուրքիա հարաբերություններում 1950-1990-ական թթ.** Ենթազխում ներկայացվում է 1950-1990-ական թթ., հույն-թուրքական հարաբերություններում առկա, «ատլանտիստական համերաշխության» գործոնի դերը և դրա էվոլյուցիան: Մանրամասն ներկայացվում են, մինչ 1974 թ. Կիպրոս թուրքական ներխուժումը, կիպրական խնդիրը լուծելու ԱՄՆ-ի տեսլականները, Հունաստանի և Թուրքիայի տեսակետները միմյանց մոտ բերելու համար ԱՄՆ-ի կողմից «ատլանտիստական համերաշխության» և «խորհրդային սպառնալիքի» գործոնների շահարկումները, ինչպես նաև Թուրքիայի Կիպրոս ներխուժման վերաբերյալ ԱՄՆ-ի դիրքորոշման հիմքերը: Ենթազխում ներկայացվում է նաև 1974 թ.-ից հետո «ատլանտիստական համերաշխության» գործոնի և ընդհանրապես ատլանտիզմի գաղափարի վերափոխումները և հույն-թուրքական հարաբերություններում նրա աստիճանաբար դիրքերի զիջումը նոր աշխարհաքաղաքական հայեցակարգին՝ եվրոպիզմին:

4.2 **Կիպրական խնդրի և էգեյան հիմնահարցի ազդեցությունը Թուրքիայի եվրոինտեգրացիոն գործընթացի վրա 1990-ական թթ.** Ենթազխում նախ ներկայացվում են Հունաստանի և Թուրքիայի եվրոինտեգրացիոն գործընթացի առանձնահատկությունները մինչ 1990-ական թթ.: Այնուհետև, մանրամասն ներկայացվում է, Մասսոբիխտի պայմանագրից և Կոպենհագենյան չափորոշիչների հրապարակումից հետո, Թուրքիայի եվրոինտեգրացիոն գործընթացներում առաջացած բարդությունների պատճառները՝ հատկապես շեշտը դնելով Թուրքիայի եվրոինտեգրացիոն գործընթացի վրա կիպրական խնդրի և էգեյան հիմնահարցի ազդեցության վրա:

Ենթազխում բավական ընդգրկուն անդրադարձ է կատարվում նաև, 1990-ական թթ. Կիպրոսի Հանրապետության և Թուրքիայի զուգահեռ ընթացող եվրոինտեգրացիոն գործընթացների միմյանց վրա ունեցած փոխադարձ ազդեցություններին:

Եզրակացություններ: Ուսումնասիրելով Թուրքիա-Հունաստան հարաբերությունները 1950-1990-ական թվականներին՝ ելել ենք հետևյալ հիմնական եզրահանգումների.

1. Կիպրոսի հունական համայնքի ազգային ինքնության ձևավորման մեջ հատկապես կարևոր էր Հունաստանի անկախացումից հետո, հիմնականում կրթության միջոցով, հունական ազգային գաղափարների տարածման դերը: Կիպրոսի մուսուլմանական համայնքի ազգային ինքնության զարգացումը, ի տարբերություն հունականի, տեղի ունեցավ ավելի ուշ՝ սկսած 1920-ական թթ.-ից և փոքր ինչ «արիեստական» էր ու ավելի շուտ բրիտանական կրթական քաղաքականության և Թուրքիայի քեմալական գաղափարների ակտիվ «արտահանման» արդյունք էր:

2. Մեծ Բրիտանիային, 1950-ական թթ. կեսերին, հաջողվում է կիպրական խնդրում, ի հակակշիռ Հունաստանի, ներգրավել նաև Թուրքիային, բացի դրանից, բրիտանական քաղաքականության հետևանքով, հաջողվում է փոխել կիպրական հարցի էությունը. սկզբնական ազգային-ազատագրական հակազաղութային բնույթն աստիճանաբար վերածելով Կիպրոսի հունական և թուրքական համայնքների ու նրանց հովանավորող երկրների՝ Հունաստանի և Թուրքիայի միջև խնդրի:

3. 1959-1960 թթ. Յուրիխ-Լոնդոնյան համաձայնությունները և երեք պետականաստեղծ պայմանագրերը ոչ միայն չվերացրեցին Կիպրոսի հունական ու թուրքական համայնքների միջև առկա հակամարտությունը, այլև, այդ համաձայնություններում և կիպրական սահմանադրությունում գոյություն ունեցող հակասություններն էլ ավելի սրեցին առանց այն էլ լարված կիպրական խնդիրը:

4. «Սև գնդապետների» Կիպրոսի նկատմամբ վարած ագրեսիվ քաղաքականությունը և գազաթնակետը՝ 1974 թ. հուլիսի 15-ին Կիպրոսում տեղի ունեցած հեղաշրջումը, հաշվի չէր առել միջազգային դրության փոփոխությունները և օբյեկտիվ իրողությունները, ինչի հետևանքով Թուրքիան ստացավ հնարավորություն՝ Կիպրոս ներխուժելու և տարածաշրջանում Հունաստանի նկատմամբ ստրատեգիական առավելության հասնելու համար:

5. Կիպրոսի հյուսիսային հատվածի օկուպացիայից հետո, Թուրքիայի կողմից դեպի կղզի պետական մակարդակով կազմակերպված ներգաղթը, թուրքական քաղաքականության հետևանքով սկսված տնտեսական դժվարությունները, ինչպես նաև Կիպրոսի թուրքական համայնքում աճող դժգոհության և արտագաղթի մեծ ալիքը, ևս մեկ անգամ ակնառու կերպով ցույց էին տալիս, որ Կիպրոս թուրքական ներխուժման իրական նպատակը ոչ թե թուրք-կիպրացիների «պաշտպանությունն» էր, այլ տարածաշրջանային հիմնական հակառակորդի՝ Հունաստանի, նկատմամբ առավելության հասնելու ձգտումը:

6. Էգեյան հիմնահարցի առաջացումը, բացի էներգակիրների համար սկզբնական պայքարից, իր վրա կրում էր նաև կիպրական խնդրի, Թուրքիայի ներսում ընթացող (առավել ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու համար) փոփոխությունների, ինչպես նաև հույն-թուրքական հարաբերություններում կարևոր տեղ զբաղեցնող պատմական դարավոր տրավմաների ազդեցությունը:

7. 1990-ական թթ. Էգեյան հիմնահարցը շարունակում էր չլուծված մնալ և բարդացնել հույն-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը: Հատկապես նշանակալի էր 1990-ական թթ. կեսերից, Թուրքիայի կողմից առաջ քաշված «գործ գոտիների» խնդիրը, որով Թուրքիան, Լոզանի պայմանագրի կնքումից հետո առաջին անգամ, Հունաստանին տարածքային պահանջներ էր ներկայացնում և էականորեն բարդացնում Էգեյան հիմնահարցը՝ այն դարձնելով ավելի պայթյունավտանգ:

8. 1974 թ. Կիպրոս թուրքական ներխուժումը ոչ միայն շրջադարձային էր հույն-թուրքական հարաբերությունների, այլ նաև «ատլանտիստական համերաշխության» գործոնի և ՆԱՏՕ-ի դերի համար: 1974 թ.-ից հետո և հատկապես 1990-ական թթ., ատլանտիզմի գաղափարը հույն-թուրքական հարաբերություններում իր դիրքերը սկսում է աստիճանաբար զիջել եվրոպիզմին: 1990-ական թթ., կապված Թուրքիայի և Կիպրոսի Հանրապետության եվրոինտեգրացիոն գործընթացների ակտիվության հետ, եվրոպիզմը դառնում է Հունաստանի ու Թուրքիայի համար արտաքին քաղաքական ամենակարևոր ուղղությունը, իսկ եվրոպական կառույցները՝ կիպրական խնդրի և էգեյան հիմնահարցի քննարկման գլխավոր հարթակը:

Հավելվածներում ներկայացված են քարտեզներ, որոնք վերաբերում են Կիպրոսի ժողովրդագրական պատկերին, թուրքական անկլավներին, բրիտանական ռազմաբազաների տեղակայությանը և 1974 թ. թուրքական ներխուժումից հետո ստեղծված իրադրությանը: Ներկայացված են նաև էգեյան հիմնահարցի վերաբերյալ քարտեզներ, որտեղ պատկերված են տարածքային ջրերի, մայրցամաքային շելֆի բաժանումները, ինչպես նաև որոշ կղզիների տեղակայումները:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Խաչատրյան Ռ., Կիպրոսում հունական և թուրքական համայնքների առաջացումը. պատմական նախադրյալները, Արևելագիտության հարցեր, Երևան, 2020, N 17, էջ 97-106:

2. Խաչատրյան Ռ., Կիպրոսի խնդրում Հունաստանի ու Թուրքիայի ներգրավվումը և խնդրի միջազգայնացումը, Արևելագիտության հարցեր, Երևան, 2020, N 18, էջ 79-95:

3. Խաչատրյան Ռ., 1963-1964 թթ. կիպրական ճգնաժամի ազդեցությունը հույն-թուրքական հարաբերությունների վրա, Պատմություն և քաղաքականություն, Երևան, 2021, 6 (17), էջ 68-82:

4. Խաչատրյան Ռ., 1974 թ.-ի Կիպրոս թուրքական ներխուժումը և նրա նախադրյալները, Արևելագիտության հարցեր, Երևան, 2021, N 20, էջ 87-98:

5. Խաչատրյան Ռ., Հույն-թուրքական հարաբերություններում էգեյան հիմնահարցի առաջացումը և դրա նախադրյալները, Տարածաշրջան և աշխարհ, Երևան, 2022, N 2, էջ 16-24:

6. Խաչատրյան Ռ., Էգեյան հիմնահարցի սրացումը հույն-թուրքական հարաբերություններում 1990-ական թթ., Պատմություն և քաղաքականություն, Երևան, 2022, 1 (18), էջ 63-78:

7. Khachatryan R., Turkey's State Policy on Cyprus after the Occupation of the North of the Island, Գիտական Արցախ, Երևան, 2022, 1 (12), էջ 115-127:

RAFIK ARAM KHACHATRYAN
THE TURKISH-GREEK RELATIONS IN THE CONTEXT OF ALLIES
CONFLICTS (1950 -1990)

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the **Candidate of Historical Sciences in the field of “World History” 07.00.02**. The defense of the dissertation will take place on July 15th, 2022, at 12:00 at the meeting of the Supreme Certifying Committee Specialized Council 006 at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

SUMMARY

The dissertation is devoted to the study of controversial Greek-Turkish issues from 1950 to 1990 and their influence on the Greek-Turkish allied relations within NATO. The importance of the topic is especially emphasized by the remaining contentious issues of Greek-Turkish relations in the modern world - the Aegean question, the Cyprus problem, their importance, as well as their impact on regional security, economic, integration, humanitarian and other issues. The topic is relevant for understanding the nature of Turkey's policy towards neighboring countries. Of particular importance is the Cyprus issue, which was, in fact, the first ethnoterritorial disputable issue of the Potsdam world order after the Second World War, which served as a vivid example in the settlement of ethnoterritorial conflicts in the post-Soviet space. countries.

The dissertation paper consists of Introduction, four Chapters, Conclusion, References, and Appendices.

The Introduction justifies the topic of the dissertation paper and represents the scientific novelty of the research, theoretical-methodological foreground, as well as reviews of the sources included in the paper.

The first chapter, entitled “The Emergence of the Cyprus Problem. The Historical Background of "The Regional Development", consists of two sub-chapters,

which present the genesis of the Cyprus issue, the influence of the Ottoman and British colonial policies on it, the prerequisites for the involvement of Greece and Turkey in the Cyprus issue, as well as their main goals and interests.

The second chapter, named "The Development of the Cyprus Problem and Its Impact on Turkey-Greece Relations in 1960-1983", consists of three sub-chapters, which introduce the escalations of the Cyprus issue of 1963-1964, 1967, and 1974, and their causes and the overall impact on Cyprus. Special emphasis is placed on 1967 and the reasons for the controversy between the "colonels" who came to power in Greece, and the government of Makarios, as well as the role of those controversies in the Turkish invasion of Cyprus. In this chapter, a rather detailed reference is made to the state policy (including demographic) pursued by Turkey in the occupied part of Cyprus after 1974, as well as the impact of Turkey's state goals on the future of Cyprus.

The third chapter, titled "The Genesis of the Aegean Problem and its Role in Turkish-Greek Relations", consists of three sub-chapters, devoted to the analysis of the preconditions for the emergence of the Aegean issue, which has become the most acute issue since the mid-1970s in Greek-Turkish. The components of the Aegean issue are presented separately, related to the definition of Greece and Turkey's territorial waters, the determination of the continental shelf size, the demilitarization of the Aegean islands, the determination of air borders, the clarification of Flight Information Areas (FIR) and from the middle of the 1990s, with the question raised by Turkey about the "gray zones".

The fourth chapter, called "Turkish-Greek Issues in the Context of Allied-Integration Processes", consists of two sub-chapters, which present the role of the "Atlantic Solidarity" factor between the two NATO member states on the contentious issues in Greek-Turkish relations, its evolution in Cyprus, after the Turkish invasion after 1974, and especially after 1970 in Cyprus. This chapter presents in detail the

Greek-Turkish relations after 1974 and especially the role of Europeanism in these relations in the 1990s.

The Conclusion sums up the main results of the research undertaken within the frames of our dissertation paper.

ХАЧАТРЯН РАФИК АРАМОВИЧ

ТУРЕЦКО-ГРЕЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ

В КОНТЕКСТЕ «СОЮЗНИЧЕСКИХ КОНФЛИКТОВ» (1950-1990 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - “Всемирная история”. Защита состоится 15 июля 2022 года, в 12:00 на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению спорных греко-турецких вопросам 1950-1990 гг. и их влиянию на греко-турецкие союзнические отношения в составе НАТО. Важность темы особо подчёркивается сохраняющимися спорными вопросами греко-турецких отношений в современном мире - эгейским вопросом, кипрской проблемой, их важностью, а также их влиянием на региональной безопасности, экономические, интеграционные, гуманитарные и другие вопросы. Тема актуальна для понимания характера политики Турции в отношении соседних стран. Особое значение имеет кипрский вопрос, который был, по сути, первым этнотерриториальным спорным вопросом потсдамского мироустройства после Второй мировой войны, послужившим ярким примером в урегулировании этнотерриториальных конфликтов на постсоветском пространстве.

Диссертация состоит из введения, четырех глав с соответствующими подглавами, заключения, списка использованной литературы и приложений.

Во Введении обосновывается актуальность темы, представляются цель, задачи, научная новизна, теоретико-методологическая база исследования, а также обсуждаются представленные источники литературы.

Первая глава «Возникновение кипрской проблемы. Исторические предпосылки «регионального развития» состоят из двух подглав, в которых представлен генезис кипрского вопроса, влияние на него османской и британской колониальной политики, а также предпосылки вовлечения Греции и Турции в кипрский вопрос, а также их основные цели и интересы.

Вторая глава, озаглавленная «Развитие кипрской проблемы и ее влияние на турецко-греческие отношения в 1960–1983 гг.», состоит из трех подглав, в которых представлена эскалация кипрской проблемы в 1963–1964, 1967 и 1974 гг., ее причина и общее влияние на Кипр. Особое внимание уделяется 1967 году и причинам разногласий между «полковниками», пришедшими к власти в Греции, и правительством Макариоса, а также роли этих разногласий в вопросе турецкого вторжения на Кипр. В этой главе достаточно подробно рассматривается государственная политика (в том числе демографическая), проводимая Турцией на оккупированной части Кипра после 1974 г., а также влияние государственных целей Турции, связанных с будущим Кипра.

Третья глава, озаглавленная «Возникновение проблемы Эгейского моря и ее роль в турецко-греческих отношениях» состоит из трех подглав, посвященным анализу предпосылок возникновения Эгейского вопроса, ставшего наиболее острым вопросом с середины 1970 гг. в греко-турецких отношениях. Компоненты проблемы Эгейского моря представлены отдельно, связанные с определением территориальных вод Греции и Турции, определением размера континентального шельфа, демилитаризацией островов Эгейского моря, определением воздушных границ, уточнением зон полетной информации (ЗПИ) и с середины 1990-х годов, с поднятым Турцией вопросом о «серых зонах».

Четвертая глава под названием «Турецко-греческие вопросы в контексте союзнических интеграционных процессов» состоит из двух подглав, в которых представлена роль фактора «атлантической солидарности», существующая между странами-членами НАТО, а также его эволюция в развитии греко-турецких отношений, особенно со времен вторжения Турции на Кипр в 1974 г. Данная глава также детализирует проблему греко-турецких отношений и места европеизма в нем.

В заключении обобщаются выводы полученные в результате исследования, предпринятого в рамках настоящей диссертационной работы.

A handwritten signature in black ink, appearing to be the initials 'Хи' or similar, located in the center of the page.

